ռաջին քառորդից, ինչպէս օրինակ Գլաձորի դպրոցի Թորոս Տարօնեցու գործերի մէջ. ծագմամբ հեռաւոր արևելքից, հաւանօրէն մոնղոլական պետութեան ժամանակ մեզ եկած։ Նոյն թղթի Թ. 11–12 համարի հանդէպ լուսանցքում Քրիստոս, որպէս քահանայապետ, յունական եպիսկոպոսի զգեստաւորութեամբ՝ եմիփորոնով, աւետարանը կրծքին սեղմած և աջով խաչակնքելիս. դէմքի արտայայտութիւնը խաղաղ, աչքերը խոշոր, գլուխն առանց սաղաւարտի, փոքր ինչ եղծուած։

Նկարուած են և Պօղոսի պատկերները այլ և այլ դիրքերով, 32 ա. 73 ա. եւ 80 բ., վերջինը, (պատկ. 4) երեսի վերայ

Պատկեր 4

ընկած, դարձի տեսարանը, տարաբաղդաբար վատ պահուած վիճակում. ամբողջ երեսը 15 × 12 սմ. մեծութեամբ։ Երկինք ձևացնող կիսաշրջանից երեւում է դուրս եկած մի ձեռք, որից երեք կարմիր ճառագայթներ իջնում դէպի Պօղոսը՝ «Սաւուղ, Սաւուղ, զի՞ հալածես զիս» վերտառութեամբ։ Երբ. թղթի սկզբին՝ 114 ա. Պօղոս նստած է ոսկեզօծ, երեսարձիգ բարձով (մութաքայ) բոլորակ աթոռի վերայ, աւետարանիչներին յատուկ զգեստաւորութեամբ. անկիւնում երկինքն է, որտեղից դուրս է գալիս աղաւնակերպ Ս. Հոգին, բերանից ճառագայթներ ուղղուած դէպի հեղինակ առաքեալը։

Զարդերից յիշատակելի են պարիկ 126 բ. կրկին գլխով և կրկին զոյգ ոտներով արձիւ(*) 5,50 սմ. մեծութեամբ, պարանոցը և պոչը զոյգ գծերով մանեկաւորած, 128 ա. (պատկ. 5). աղաւնու նմա-

Պատկեր 5

նութիւն բերող մի ուրիշ թռչուն՝ պարանոցն ու պոչը դարձեալ մանեկաւորած 113 բ. (պատկ. 6) 6,50 սմ. մեծութեամբ

Պատկեր 6

(*) Այդպիսի արձիւների մասին տես մեր «Խաղբակեանք», եր. 177։